ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Գեղամ Գևորգյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Գերմանիայի Դաշնային Հանրապետության մայրաքաղաք Բեռլին 2019 թվականի հունվարի 17-19-ը
4.	Հրավիրող կողմը	Գերմանիայի Դաշնային Հանրապետության պարենի և գյուղատնտեսության դաշնային նախարար Ջուլիա Քլոքներ
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	- Մասնակցություն «Գյուղատնտեսությունը վերածվում է թվայինի՝ խելացի լուծումներ ապագա գյուղատնտեսության համար» խորագրով պարենի և գյուղատնտեսության գլոբալ ֆորումին, ինչպես նաև ֆորումի շրջանակներում կազմակերպվող գյուղատնտեսության նախարարների 11-րդ համաժողովին: Համաժողովին մասնակցել են մոտ 70 երկրների գյուղատնտեսության նախարարներ: Համաժողովը նախագահում էր Գերմանիայի Դաշնային Հանրապետության պարենի և գյուղատնտեսության դաշնային նախարար Ջուլիա Քլոքները: - Մասնակցություն <<Բեռլինյան կանաչ շաբաթ>> գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությանը:
6.	Քննարկված թեմաները	- գյուղատնտեսության ոլորտում թվային տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները և մարտահրավերները - թվային տեխնոլոգիաները որպես ապագա գյուղատնտեսության կարևոր մասնիկ - մեծածավալ տվյալների (big data) կիրառության լավագույն պրակտիկան տարբեր երկրներում - նոր տեխնոլոգիաների կիրառումը գյուղատնտեսության բնագավառում
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	- հանդիպում Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարար Լևան Դավիթաշվիլիի հետ, որի ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում հայ-վրացական հետագա համագործակցության հեռանկարները: Նախարարի պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը հրավիրել է

		Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարարին այցելել Հայաստան: - հանդիպում ՉԺՀ գյուղատնտեսության և գյուղի զարգացման նախարարի տեղակալ Քյու Դոնգյուի հետ, որի ընթացքում չինական կողմը ներկայացրել է շնորհանդես՝ գյուղատնտեսության բնագավառում նոր տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ: Պարոն Դոնգյուն՝ որպես ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գլխավոր տնօրենի առաջիկայում կայանալիք ընտրությունների թեկնածու՝ ներկայացրել է իր ծրագրերը: Քննարկվել է խաղողի հենքով ստեղծվող խմիչքների ՉԺՀ արտահանման հնարավորությունները: - հանդիպում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գլխավոր տնօրեն Գրացիանո դա Սիլվայի և ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ներկայացուցիչ, գլխավոր տնօրենի օգնական Վլադիմիր Ռախմանինի հետ, որի ընթացքում քննարկվել են ՊԳԿ-ի կողմից Հայաստանում իրականացվող ընթացիկ ծրագրերը, ինչպես նաև նոր ծրագրերի իրականացման հնարավորությունները: - հանդիպում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են հետագա համագործակցության հարցեր: - հանդիպում Նիդեռլանդների Թագավորության կաթնարդյունաբերության բնագավառի գործարարների հետ, որի ընթացքում քննարկվել են հնարավոր համագործակցության հարցեր: Կողմերը գոհունակությամբ նշեցին, որ համագործակցության զարգացման ուղղությամբ արդեն իսկ իրականացվում են քայլեր, մասնավորապես անդրադարձան 2018 թվականի նոյեմբերին կաթնարդյունաբերության բնագավառի հոլանդացի փորձագետների այցին Հայաստան, ինչպես նաև 2019 թվականի գարնանը Նիդեռլանդներում բիզնես համաժողովի կազմակերպման հնարավորությանը՝ հրավիրելով նաև հայաստանցի գործարարներին:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	- Համաժողովի արդյունքում գյուղատնտեսության նախարարների կողմից ընդունվել է համատեղ կոմյունիկե և կոչ է արվել մասնակիցներին ազգային մակարդակներում իրականացնել դրանում առաջարկված գործողությունները:

9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	- Առաջարկվել է համաժողովին մասնակից երկրներում անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել կոմյունիկեով առաջարկված գործողությունների իրագործման ուղղությամբ:
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Գեղամ Գևորգյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արտակ Քամալյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	21.01.2019թ.